

## Ա Ի 0

Նուէր պ. Յ. Զ.-ին

Գ. գիւղի արևելեան ծայրում գտնուում էր Մարտիրոս աղայի տունը, որը իւր բարձրութեամբ և մեծութեամբ իսկոյն ևեթ աչքի էր ընկնում գիւղը մտնելիս: Տան առաջ տարածուում էր բակը, բակի մէջ բացուում էին Մարտիրոս աղայի առանձնասենեակի (Գիւանի) չամպարը — շտեմարանի և մառանի դռները. իսկ բակից դուրս մի սափէն հեռաւորութեան վրայ գտնուում էր աղբիւրը, որի երկու երկաթեայ խողովակներից ցայտում էր պարզ և սառը ջուր: Աղբիւրի շուրջը շարւած էին հաստաբուն և բազմաձիւղ ծառեր, որոնց ստուերների տակ երբեմն-երբեմն ամարային օրերում վճռուում էին գիւղական խնդիրներ Մարտիրոս աղայի նախագահութեամբ:

Սորա անունը ո՛չ միայն գիւղում այլև ամբողջ գաւառում տարածուած էր շնորհիւ իւր հարստութեան, բարեգործութեան և որ ամենից գլխաւորն է՝ պապական «օջախ»-ի: Եւ այդ պապական «օջախ»-ի մասին շատ առասպելական զրոյցներ էին պատում ժողովրդի մէջ: Պատմում էին թէ Մարտիրոս աղայի տան մէջ բնակւում է մի ծերունի, որը յայտնուում է, երբ մի դժբաղդութիւն է սպասում Մարտիրոս աղային: Սորա «Դօմկաթը» կախում ունի այդ ծերունուց, որը տարիներ իվեր բնակուելիս է եղել Մարտիրոս աղայի տանը:

Մայիսեան գեղեցիկ օրերից մէկն էր: Մարտիրոս աղան լուռ և մունջ նստած աղբիւրի մօտ անձնատուր էր եղել մաածմունքներին. նրա լայն ճակատի վերայ հաւաքւել էին կնճիռներ, նորա աչքերը լցուած էին արտասուքով, որ կա-

Թիւ-կաթիլ գլորուելով թափուում էին նորա ծնկների վերայ և միւսնոյն ժամանակ նորա սիրտը հեկեկանքից տրու-արուք էր լինում: Նա վեր կացաւ տեղից, ուշադրութեամբ շուրջը նայելով հանեց գրպանից թաշկինակը և մաքրեց արտասուքը. նա բարկութիւնից սկսեց արագ-արագ ման գալ և ձեռքերը միմեանց սեղմելով սկսեց խօսել: Ի՞նչ է դորա պատճառը:—Մարտիրոս աղայի ծերուկ Վրովլաթի-ը երազում յայտնել է թէ իրեն մի մեծ դժբաղդութիւն է սպասում, որին զոհ պէտք է գնան թէ՛ ինքը և թէ՛ ընտանիքը:

Մարտիրոս աղան առաւօտը վեր կացաւ բոլորովին փոխուած, նա հաւատում էր ծերուկին առանց այլ և այլու-թեան, նա այդ բանը չը յայտնեց ոչ որի, որպէս զի ոչ որի սիրտը չը պղտորէ: Ահա այդ բանի մասին էր մտածում Մարտիրոս աղան. արդեօք ի՞նչ դժբաղդութիւն պիտի լինի այդ: Բայց չանցաւ երկու ժամ, նորա մօտ եկաւ նորա վաղեմի ծանօթ քիւրդ Մըհէն և ասաց նորան.

«Անցեալ օր ցեղապետ Մըստօն ձեր գիւղի միջով անցնելիս, տեսել է քո հարսին և զարմացել նորա գեղեցկութեան վերայ. նա կամենում է հէնց առաջիկայ գիշեր 40 ձիաւորով յարձակում գործել տանդ վերայ և յափըշտակել հարսիդ, այդ բանը իմ եղբայր Ըլոն ասաց ինձ, որը Մըստոյի (խուլաճի) — ծառան է:

Մարտիրոս աղան երբ այդ լուրը լսեց, նորա երեսի կարմիր գոյնը փոխուեց, այլայլուեցաւ ու յուսահատ ընկաւ Մըհէյի ոտքերը հնար և օգնութիւն խնդրելու.

— Իմ քիւրուայ Մըհէ, ըստ ու դիւա (խնդիր) կընեմ քրզնից մի ծամբա բանաս ու մըզի էս խատից փրկիս:

— Մարտիրոս աղա ես ի՞նչ անեմ, իմ ձեռքում ի՞նչ կայ, դու չգիտե՞ս, որ մենք ևս նորա ձեռքի տակ ենք: Ինչպէս որ ուզէ, այնպէս կը վարուի մեզ հետ: Ես քո հին զբիրուէնս — ծանօթն եմ, իմ գլխի մազերից շատ եմ կերել քո տան հաց, և այդ բանը լսելով, եկայ քեզ յայտնելու, բայց միայն մի ձար կայ, որի միջոցով կարող է քո հարսդ ազատուի, այն է՝ որդիդ և հարսդ գնան Ռուսաստան:

— Մհէ շատ շնորհակալ եմ քրզնէ. քու բարի գործի համար և այդ խորհուրդը լաւ է, եթէ որդիս համոզուի:

— Ինչպէս կարող է չհամոզուել, առաջ խրատիր, եթէ

չը լսեց՝ ստիպէ, որովհետեւ ձեր փրկութիւնը միայն դրանով կարող է լինել: Եւ ես իմ պարտքս եմ համարում քո որդուն ու հարսին ողջ ու առողջ անցկացնել:

— Եւստ շնորհակալ եմ: Արի, դնանք տուն ճաշենք և ապա գնա:

Երկուսը միասին գնացին Մարտիրոս աղայի առանձնասենեակը: Մարտիրոս աղան հրամայեց կնոջ, որ իրեն և իւր քերուայ ՄըՏէին հաց բերէ: Մի քիչ յետոյ Մարտիրոս աղայի կինը՝ Գիւլէն պատրաստեց «ձուածեզ», մածուն, մեղրով կարագ և բերեց փռանձնասենեակը, ուր յատակի վերայ փռուած գորգի վրայ նստած էին Մարտիրոս աղան և իւր պատուելի հիւրը:

— Կին, ինչու այգբան ուշացրիր, հարցրեց Մարտիրոս աղան. բայց Գիւլէն առանց ամուսնուն պատասխանելու, գնաց և բարևեց ՄըՏէին:

— Ինչպէս ես եկել ՄըՏէ, քէֆդ ինչպէս է: Կինդ Գիւլիզարը ի՞նչ է անում:

— Փառք Աստուծոյ, բոլորն էլ ողջ և առողջ են և քեզ բարևում: Կինը տեսնելով՝ իւր ամուսնու այլայլուած դէմքը, իսկոյն և եթ գուշակեց, որ ՄըՏէն մի վատ լուր բերած կը լինի իւր աղայից, կամ փարայ, կամ ցորեն, կամ տաւարների համար խոտ պահանջելու է ուղարկուած: Իսոյց դժբաղդարար դոցանից ոչ մէկն էլ չէր: Այդպիսի թեթև պահանջներն այնքան սովորական էին դարձել Մարտիրոս աղայի համար, որ վերջինս այդպիսի շնչին պահանջներին երբէք ուշագրութիւն չէր դարձնում:

— Գիւլէ, գնա բանիդ, ի՞նչ ես սպասում այստեղ: Դու գիտես, որ ես չեմ ուզում որ կին արմատը մարդու գործերի մէջ խառնուի, և վերջինս առանց «ձէն ու փուս» հանելու գնաց:

Ճաշից յետոյ ՄըՏէն մաս բարև ասելով գնաց և խօսք տուեց, որ եգուց կը գայ: ՄըՏէն շատ էր ցաւում. նա բոլորովին անկեղծ էր վերաբերում դէպի Մարտիրոս աղան: Նա իւր ազգակիցների նման չէր ատում հայերին, ընդհակառակը նա սիրում էր նրանց: Նա մանկութիւնից սկսած մինչև ամուսնանալը Մարտիրոս աղայի նուպատար էր՝ «գիշերապահ». նրա մէջ արիւն և մի էին դարձել հայ սովո-

րուծիւնները, հայ վարք ու բարքը. նա թէպէտ անունով  
բիւրդ էր, բայց իսկապէս հայ էր:

Յեզլեղուկ բազմը նրան բաժանեց Մարտիրոս աղա-  
յից և նա մտաւ Մըստոյի մօտ հովուութեան պաշտօնով. այդ  
բաժանման պատճառը նորա եղբայրն էր հանդիսացել.  
կասկածելով ՄըՏէի հայ դառնալու վրայ, բայց ի հարկէ  
այդպիսի բայլ չէր կարող անել նա այն ժամանակ, երբ իւ-  
րաբանչիւր հայի գլուխը բողբոջի մօտ հաւասար էր սոխի գլխի:

Երեկոյ էր, երբ ՄըՏէն հասաւ իւր տեղը. նա ոչ-  
խարի հօտը յանձնելով իւր ընկերոջ, գնաց Մըստոյ աղա-  
յի մօտ և թոյլաւուծիւն խնդրեց գնալու Գ. գիւղը:

Երբ ՄըՏէն գնաց Մըստոյի կոնի մօտ, որը գը-  
տընուում էր Ապիտակ սարի ստորոտում Ազըր գէօլի մօտ,  
նա դժբաղդաբար Մըստոյ աղային չգտաւ այդտեղ. նա-  
ժիշտներից տեղեկացաւ, որ գնացել է որսի իւր ծառաների  
հետ միասին: ՄըՏէն մի քանի ժամ սպասելուց յետոյ, տե-  
ւաւ, որ ձիաւորների մի խումբ երգելով գալիս են դէպի  
վրան, նա իսկոյն և եթ ճանաչեց Մըստոյին, որը հեծել  
էր արաբական նժոյգը. վազեց դէպի նա, բռնեց ձիու  
սանձը: Երբ Մըստոն ՄըՏէին տեսաւ, հարցրեց թե ի՞նչ  
գործով է եկել—ՄըՏէն գլուխը խոնարհեցնելով ցածր  
ձայնով պատասխանեց.

— Աղա, խնդրեմ թոյլ տաք ինձ գնալ Գ. գիւղը:

— Ի՞նչ գործ ունիս, բղաւեց Մըստոն:

— Առնելիք ունիմ:

— Գէ՛հ, գնա՛, բայց շուտ գաս, եթէ մի ոչխար կորչի՝  
քեզնից կը պահանջեմ, այդ էլ հաստատ իմանաս:

ՄըՏէն շնորհակալութիւն յայտնեց և իսկոյն ևեթ հեռա-  
ցաւ վրանից, գնաց շուտով իւր վրանը, որը գտնուում էր  
իւր աղայի վրանից ոչ հեռու, պահանջեց կնոջից իւր զէն-  
քերը և նոյն իսկ չպատասխանելով կնոջ հարցերին, իրեն  
օգնական կանչեց Աստծուն և արագ քայլերով դիմեց դէպի  
Գ. գիւղը:

Մըստոյ աղան իւր մի քանի ծառաների հետ գնաց վը-  
րան, որը բաժանուած էր մի քանի սենեակներից: Գռան  
մօտ անմիջապէս գտնուում էր Մըստոյի առանձնասենեակը, որի  
կողքին էր կանանոցը, իսկ միւս սենեակները ծառայում էին իր-

րև ընդհանուր դահլիճներ: Մըստոն իւր մի քանի ծառաների հետ խորհրդակցելուց յետոյ, գնաց Ազըր գէօլի շուրջը ման գալու:

Լրսնկայ գիշեր էր: Անթիւ աստղերը փայլում էին երկնակամարի վրայ: Լուսինը իւր աղօտ ճառագայթները սփռել էր երկրիս վրայ. Ազըր գէօլը խաղաղ էր, նրա չըբնաղ տեսքը տեսնողին զմայլեցնում էր: Չորս կողմից պատած լինելով ծաղկալից դաշտով, որի վրայ բարձրանում էին փոքրիկ բլուրներ, որ աւելի ևս հիացնում էին նորա տեսքը: Մըստոն, դա պատկանում էր Հսլաստանցի բուրդ աշիրաթին, բարձրահասակ և ամուր կազմուածքով. նորա խոր ընկած աչքերը, նեղ և կնճռոտ ճակատը, նորա թաւ յունքերը, նորա ածիլած և ուռած թշերը, կատարեալ գաղանային տպաւորութիւն էին թողնում մարդու վրայ. նա մի քանի անգամ երթեկեկութիւն անելով՝ կանչեց իւր մօտ իւր ծառաներին և պատուիրեց նոցա պատրաստութիւն տեսնել Մարտիրոսի հարսը փախցնելու: Նա իւր ծառաներին առատ նուէրներ խոստացաւ տալ, եթէ հայուհուն ողջ և առողջ կը յանձնեն իրեն: Ի պատասխան դորա, որոտաց թիւրդ ամբօխի աղաղակը և բոլորեքեան միաբերան գոռացին. «Երդուում ենք շեղի Բըմուզանի անունով, որ մեր փրօջ հրամանը պէտք է կատար ածենք»: Ապա վերագարձան վրան: Այդ բանը արդէն մի քանի շաբաթ առաջ պատուում էր Մըստոյի ծառաների մէջ, ոչ ոք բացի Մըհէի եղբօրից չգիտէր թէ արդեօք երբ պիտի կատարուի յարձակումը: Այդ օրը բոլորեքեան էլ, որոնք պիտի մասնակցէին այդ գործին, իմացան, որ առաջիկայ գիշերը 40 ձիաւորով պէտք է տեղի ունենայ յարձակումը:

Այդ բանը իմացել էր և Մըստոյ աղայի կին Ըշէն, որը հակառակ էր ամուսնու նպատակներին և ամենայն ջանք գործ էր դնում խափանելու համար:

Բ

Երբ Մըհէն բաժանուեց Մարտիրոս աղայից՝ վերջինս սկսաւ խորը մտածել:

—Արդեօք, այս ինչ կեանք է: Աշխատում ես, բայց

աշխատանքիդ պտուղը չես վայելում, ծեծ, հայհոյանք, նախատինք, այդ բոլորը վիճակուած են մեզ, բայց դոցանից դեռ ուզում են ընտանեկան սուրբ պատուիդ էլ յափշտակել, բայց դոքա չգիտեն, որ հայր ամեն բան զսհում է ընտանեկան պատուի համար, թէպէտ չունինք այնքան ոյժ նրան դիմադրելու, բայց այնուամենայնիւ ասելի գերադաս եմ համարում ծերութեան այս հասակում այդպիսի մի պատուով մեռնել, բան ապրել աշխարհիս վերայ և անպատուած լինել: Հարկաւոր է շուտով վերջնական վճիռ տալ գործիս, գնամ որդուս և կնոջս յայտնեմ այդ բանը:

Երեկոյ էր: Ծառաները և տան աշխատաւոր դասը շրջապատել էին սեղանը և ուրախութեամբ խօսում միմեանց հետ: Դոցա թւում էր նաև նրա որդի՝ Ասոն. նա հանգիստ և ուրախ էր և մինչև անգամ չէր երևակայում, որ յեղյեղուկ և խաբուսիկ բաղաը նոյն իսկ յաջորդ երեկոյին մի դաւադրութիւն է պատրաստում իրեն համար: Տխուր էր Մարտիրոսը. տուն մանելուն պէս ամենից առաջ նա տեսաւ իւր որդուն և անմիջապէս արտասուքի կաթիլներ թափուեցին նորա աչքերից և դոցա հետ համարեա լսուեց նորա հեկեկանքը: Նա նստեց աթոռի վերայ, նորա մօտ եկաւ նորա ամենասիրելի թոռը, որին իւրաքանչիւր անգամ տեսնելիս ուրախութիւն էր զգում, բայց այս անգամ թոռան ներկայութիւնը պատճառ եղաւ նորա յորդառատ արտասուք թափելուն:

Երբ ճաշը վերջացաւ, նա պատուիրեց իւր որդուն, կնոջ և հարսին գալ իւր մօտ. իւր առանձնասենեակը:

Մարտիրոս աղան դուրս գալով տանից դանդաղ բայլերով դիմեց դէպի իւր ճիւղանը—առանձնասենեակը և ներս մանելուն պէս՝ նստեց բազկաթոռի վրայ, հանեց գլուխն ի վանիկ և սկսեց ծխել. մի քանի րոպէ անցնելուց յետոյ երևացին կինը, որդին և հօրսը:

Կինը տեսնելով ամուսնու տխրութիւնը հարցրեց.

— Բայ, ի՞նչ է պատահել բեզ, չլինի թէ մեր նոպատար Մըհէն վատ-վատ խաբարներ էր բերել իւր աղայից:

— Այո՛, խաբար, բայց այնպիսի մի խաբար, որ ինձ սարսափեցնում է:

— Ի՞նչ խաբար, հայր, շուտով ասա՛:

— Մըստոյ աղան ուզում է հարս... ան, չեմ կարող, լեզուս չէ շարժուում այդ բառը արտասանելու, ասաց նոս և միւնոյն ժամանակ բարձր բարձր հեկեկալով:

— Հայր իմ լաց մի լինիր, ասա՛, որպէսզի շուտով վը-տանգի առաջն առնենք:

— Մստոյ աղան ուզում է բո կինը փակց... Թող ա-նիծուի այդ պիղծ և անօրէն թիւրգը, որ յանդգնում է իմ սուրբ պատիւը արտաւերել:

— Բա՛, պարզ ասա ի՞նչ կին, ի՞նչ պատիւ:

— Ամօթ և հազար ամօթ է ինձ այդ բանն ասել: Բայց ինչ անեմ որ հարկը ստիպում է ինձ ասել և մի հնար գտնել Սիրելի որդեակս, թիւրք Թողըն՝ Մըստոյ աղան ուզում է կինս յափշտակել բռնի միջոցով:

Այդ լուրը գրգռեց նորա արդար զայրոյթը և նա բարձրաձայն գոռաց.

— Ա՛ն, դու երկչոտ ծերո՛ւկ, փոխանակ վրիժառու-թեան կրակով վառուելու, լաց ես լինո՛ւմ. երկչոտ լինել այն ժամանակ, երբ պատիւը արտաւերում են, նշանակում է զուրկ լինել զգացմունքներից: Հայր իմ, հաստատ համո-զուիր, որ մինչև մահուան վերջին րոպէն պատրաստ եմ պաշտպանել ընտանիքիս պատիւը. հարստութիւն, մա՛լ, յա-փշտակելուց յետոյ ուզում են սեպհական պատիւս յափշտակել: Այլևս ո՞ր օրուայ համար եմ պահել ուժեղ բազուկներս, էլ ինչի՞ համար եմ ապրում, ապրել անպատիւ լինելու հա-մար. այդպիսի ապրելն ես մեռնելուց վատ եմ համարում: Հայր, երդուում եմ Ս. Կարապետով, երդուում եմ սեպհական պատուովս, ո՞ր ես մինչև մահուան վերջին րոպէն հնազանդ պիտի լինեմ ասածիս: Այս խօսքերը արտասանելիս, բարկու-թիւնից նրա աչքերից թափուում էին արտասուքի կաթիլներ:

— Որդի՛, հանդարտուիր, ասաց հայրը, ես մի հնար եմ գտել, որով թէ՛ դու և թէ՛ կինդ կարող եք ազատուել: Շուտով մեր նախկին գիշերապահ Մըհէն ինձ այդ լուրը յայտնեց և միւնոյն ժամանակ խոստացաւ, որ ձեզ ողջ և առողջ սահմանը կանցկացնէ և կը տանէ Ռուսաստան:

— Հայր, ես Հաւատում եմ Մըհէլի անկեղծութեան, բայց չեմ կարող ձեր խորհուրդը ընդունել:

— Որդի՛, լսիր հօրդ, ասաց Աւօյի մայրը, արտասուա-

լից աչքերով: Եւստով հեռացիր ճեսադաւ-ից:

Միայն հարսը լուռ կեցած էր և անդադար լաց էր լինում:

Նրա կամարակապ և թուխ յօնքերը, նրա երկու աչքերը, որոնք կարծես թէ նման էին երկու փայլուն աստղերի՝ մառախուղի մէջ, նորա սև փայլուն ասեղի նման արտեանունքները, կարմիր այտերը, վարդի նոր բացուած կոկոնի նման շրթունքները, փայլուն և մարգարիտի նման ատամները, առոյգ կազմուածքը, չինարի հասակը՝ մի յաւերժահարսի ապաւորութիւն էին թողնում տեսնողի վերայ: Նորա աղջիկ ժամանակ շատերը սիրահարական խօսքեր էին ուղղել միջնորդների միջոցով. բայց ոչինչ չէ օգնել. նորա սիրտը պատկանելիս է եղել միմիայն Աւօին և իրաւ այդ երկու զոյգերը շատ չարամիտ մարդկանց նախանձ էին գրգռել: Աւօն իւր բաջուլթեամբ, ճարպիկութեամբ և գեղեցկութեամբ ոչ միայն գիւղումն էր համբաւ ստացել, այլև ամբողջ գաւառում: Աւօի աղապ ժամանակ շատ աղջիկներ գաղտնի կերպով յայտնել էին իրենց սէրը, բայց բոլորին էլ Աւօն մերժել էր:

Աւօն շատ կռիւներումն է եղել, բայց բոլորից էլ ողջ և առողջ դուրս է պրծել շնորհիւ իւր բաջուլթեան:

Նա, առանց երկիւղի յարձակում էր գործում իւր հակառկորդի վերայ, այդ ի հարկէ շնորհիւ իւր արիւթեան. և երբ քրդերն յարձակում էին գիւղի վերայ տաւարներ յափշտակելու, դոցա դիմադրող ոյժը հանդիսանում էր Աւօն:

Այս բոլորի հետ նա ունէր, ինչպէս վերև ասացինք, աննման գեղեցկութիւն. նորա փոքրիկ գլուխը, գանգուր մազերը, որ իջնում էին մինչև ուտերը, լայն ճակատը, վառ վռուն և կրակոտ աչքերը, հայկական արծուաքիթը, բարակ պեխերը և վերջապէս նորա ամուր և վիթխարի կազմուածքը ուղղակի երկիւղ և պատկառանք էին ազդում մարդու վերայ:

Երբ Աւօն խօսում էր իւր ծնողների հետ, այդ ժամանակ դուռը գարկեցին: Մարտիրոս աղան հրամայեց իւկոյն դուռը բաց անել: Դուռը բացուելուն պէս՝ երևեցաւ Մըհէն զինաւորուած:

— Բարի երեկոյ ձեզ:

— Աստծու բարին:

— Քիրուայ Մըճէին աթոռ դէր թող նստի, ասաց Մարտիրոս աղան իւր կնոջը:

— Ի՞նչպէս եղաւ գործը, արդեօք Աւօն համաձայնւում է:

— Որդիս չէ ուզում ինձ լսել, Մըճէ:

— Հայր իմ, ես միշտ հնազանդ եմ եղել քեզ և լսել եմ քո պատուէրներին, բայց սոյ դէպքում ես չեմ կարող քեզ լսել: Ես չեմ ուզում բաժանուել սոյն հայրական տնից, որի մէջ սնուել, մեծացել եմ, նոյն տան մէջ եմ ծնուել և նոյն տան մէջ էլ պիտի աւանդեմ հոգիս:

— Որդի, արի, լսիր հօրդ, մի հակառակիր, կոխիր չարի գլխին: Ես քեզնից մեծ եմ, ես աւելի շատ բան եմ հասկանում, քան թէ դու, լսիր ինձ և ան կինդ՝ դնա: Որդի, ախր դու մնակ ի՞նչ պէտք է անես 40 ձիււորի դէմ, ո՞վ կը գայ քեզ օգնական. դու չգիտե՞ս, որ մեր գիւղացիները նապաստակի պէս երկչոտ են, չես յիշում անցեալ տարուայ դէպքը, որ տեղի ունեցաւ մեր գիւղում: Քրդերը կողոպտեցին մեր դրկից Պետոյին (Պետրոսին) և մինչև իսկ ուզում էին սպանել, ոչ ոք չգնաց խեղձին օգնելու բացի քեզնից, դու էիր, որ ազատեցիր նորան: Բայց ես հաստատ գիտեմ, որ եթէ դու գտնուես վտանգի մէջ՝ ոչ ոք քեզ օգնելու չի գալ: Նոյնպէս յիշում ես, որ Սևտինի «խուլամներ» — ծառաներ պահանջում էին գիւղացիներից, որ իւրաքանչիւրն իւր կողմից մի-մի բարդ խոտ տայ Սևտին աղայի ոչխարների համար, ոչ ոք այդ բանին չընդիմացաւ բացի քեզնից և սոյդ պատճառաւ կռիւ բաց արիր նոցա հետ և այդպիսով բոլորն էլ լաւամարդ եղան բացի քեզնից: Արդէն ապացուցուած բան է, որդի, որ մենք՝ հայերս չունինք միութեան ոգի. եթէ մենք միութիւն ունենայինք, այսքան ժամանակ չէինք հեծեծայ սարդուկութեան դառն լծի տակ: Արդ, որդիակս, ստացիր քո հօր վերջնական օրհնութիւնը, յուսով եմ, որ այդ օրհնութիւնը կա՛ղատէ քեզ ամեն վտանգից, որովհետև դա բըխում է մաքուր սրտից և անկեղծ է:

— Արի՛ «քիրուայ» — բարեկամ, լսիր հօրդ, ասաց քիւրդ Մըճէն, հօրդ ասածները բոլորն էլ ճիշտ են: Ես էլ փոքրութիւ-

նից ձեր մէջ եմ եղել, ամասներիս պէս ճանաչում եմ ձեր գիւղացոց, բոլորն էլ մասնիչ, վատ մարդիկ են: Ախր դու մեծակ ի՞նչպէս պիտի կուռիս 40 ձիաւորի հետ: Կըգան բեզ կը սպանեն և կիներ կռնեն կը տանեն: Թող Աստուած վերև լինի վկայ, որ ես ձեզ ողջ և առողջ կանցկացնեմ սահման և նոյն իսկ կը գամ ձեզ հետ Ռուսաստան, որովհետև եթէ Մըստօն իմանայ՝ շատ բնական է ինձ սպանութեան կը մատնէ, ես ինքս օտարութեան մէջ կաշխատեմ և կը պահեմ ձեզ:

— Որդի, արի՛ Տօրդ և քիրուայ Մըհէյին լսիր, զըհելութիւնն մի արա՛, ես և քու հայրը 60 տարեկան ենք, բաւական է որքան ապրեցանք, թող գայ Մըստօն և մեզ սպանէ, արդէն առանց այն էլ միշտ սպանուած ենք: Այսքան ես բեզ սնուցել եմ, մեծացրել եմ, արի՛ այսօր լսիր ըս մօրը և մի մերժիր նորա առաջարկութիւնը: Ես բեզ համար միշտ աղօթող կը լինեմ գիշերը անքուն, մեր աղօթքը և արդարացի բողոքը կը հասնի Աստուծոն և Սաիր արդար դատաստանը կ'անէ:

— Ես չեմ կարող ձեզ մատնել Մըստօյի ձեռքը և ինքս երկչոտութեամբ փակել, եթէ սպանուելու ենք՝ միասին սպանուինք, եթէ մեռնելու ենք՝ միասին խմենք մահու բաժակը: Այդպէս է թելագրում ինձ խիղճս:

— Այբիս լոյս, ասաց Աւոյի մայրը, հասել եմ ծերութեան դուռը, երբեմն յեղյեղուկ բաղդը ուրախացրել է ինձ և երբեմն տխրացրել. բայց գլխաւորապէս իմ ամբողջ կեանքում տեսել եմ շատ սև օրեր: Դու գիտես, որ անցեալ տարի սպանեցին եղբորս առանց մի որ և է պատճառի, այն էլ իմ միակ և հարազատ եղբորը. և ամբողջ տարով սգի մտնելով և արտասուք թափելով՝ ցամաքել են աչքերս և դու ուզում ես հին վերքի վերայ մի նոր անբուժելի վերք ևս բանալ:

— Խնդրում եմ հանգիստ թողէք ինձ, ասաց Աւօն արտասուալից աչքերով, դուք ուզում էք, որ ես կուրորէն հետևեմ ձեզ, դուք ուզում էք որ ես չլսեմ իմ խղճի ձայնը, ես չեմ կարող բաժանուել ձեզնից և վտանգի մատնել ծնողներիս, այդ ապերախութիւն կը լինի և ի՞նչ է, վերջապէս, դուք ուզում էք, որ ես էլ ուրիշների պէս

կնոջս հետ օտարութեան մէջ թափառեմ, այդ արդէն մահ է ինձ համար:

— Քըրուայ Մարտիրոս, դառնալով Մըհէն դէպի սա, հանգիստ թողէք Աւոյին, այժմ ես հաստատ գիտեմ, որ Աւօն յետ չի կենայ իւր ասածից և իզուր է այդքան խօսելը: Ես գիտեմ, որ Աւօն անպատճառ զէնք կ'ունենայ, ես էլ Աւոյին ընկեր կըլինեմ, մենք երկուսս կը կուռենք նոցա հետ մինչև մահուան վերջին րոպէն, իսկ երբ մենք կ'ընկնենք՝ այն ժամանակ Աւոյի կինը՝ Գիւլզալը, թող ինքնասպանութիւն գործէ, որովհետև աւելի լաւ է այդ պատուով մեռնել, քան թէ անպատուած լինել:

Մըհէի այդ խօսքերը թափանցեցին Աւոյի հոգու մէջ և նրա քնարի լարերին առանձին զարկ տուին. Աւօն իսկոյն փաթաթուեցաւ նորա վզով և սկսաւ համբուրել նորան.

— Ահա, սեսնում ես ազնիւ հոգու աէր մարդ, ասաց Աւօն, Մըհէն այժմ իմ միակ մխիթարն է, հոգուս միակ թարգմանը:

Այնուհետև ծնողները երկար դիմադրելուց յետոյ՝ համաձայնուեցին Աւոյին և Մըհէին:

Բոլորը արդէն քնել էին. Մարտիրոս աղան պատուիրեց Աւոյին, որ Մըհէին տանէ հիւրասենեակը քնելու. իսկ ինքը և իւր կինը ձիացին իր առանձնասենեակը:

Աւօն Մըհէին հիւրասենեակը տարաւ, խօսեցին երկուսը միասին թէ ինչ կերպով պէտք է կուռեն, ինչ դիրք պէտք է ստանան և այլն:

Աւօն ձիաս բարեաւ ասելով՝ դուրս գնաց հիւրասենեակից՝ եկաւ տուն և գտաւ իւր կին Գիւլզալին, որ առանձնասենեակի մօտ կանգնած՝ լաց էր լինում:

— Ինչո՞ւ ես լաց լինում, սիրելի Գիւլզալ, արդեօք դու համաձայն չես իմ և Մըհէի վճռին:

— Ես գերադաս եմ համարում քեզ հետ մեռնել, քան թէ ընկնել պիղծ մարդկանց ձեռքը:

— Շատ ուրախ եմ, արի ելնենք կտուրի վերայ և գաղտուկ խօսինք, գուցէ բան ունիս ինձ ասելու:

Խաղաղ էր ամենայն ինչ: Վապտագոյն երկինքը ծածկուած էր բնբուշ ամպերով, երկնքի թագուհին՝ լուսինը խաղ էր անում ամպերի հետ, երբեմն մօտենում էր նոցա,

երբեմն թագնուամ նոցա սակ իւր ստուերը ձգելով երկրիս վերայ. երբեմն փախցնում էր ամպերին և ինքը հրապարակ դուրս գալով իւր մեղմ լուսով, լուսաւորում էր երկիրը: Ահա այդ պահուն Աւօն կաուրի վերայ ելնելով, մի ծանր հայեացք ուղղելով իւր շուրջը՝ տեսաւ, որ ամենայն ինչ խաղաղ է, բռնեց կնոջ՝ Գիւզալի ձեռքը և ասաց.

— Սիրելիս, ես գիտեմ, որ մահը անխուսափելի է, երդուենք որ մինչև վերջին րոպէն չբաժանուենք միմեանցից, թող Աստուած վկայ լինի մեզ:

— Աւետիս, մի՛թէ դու կասկածում ես իմ վերայ, մի՛թէ ես պէտք է թողնեմ քեզ. չէ՛, Աւետիս, չէ՛, երդուում եմ Աստուծով, երդուում եմ քո դալար և աղիզ արևով, որ քեզ հետ պիտի մեռնեմ. մեռնել ընամուտի՞ համար, դա ամենանուիրական և պաշտելի բանն է աշխարհիս երեսին:

— Այժմ հանգիստ եմ, սիրելի Գիւզալ, արի այդ խօսքերի համար մի համբոյր՝ գուցէ վերջնական համբոյր դրոշմեմ քո վարդազոյն պատերի վրայ:

Երկար և անվերջ համբուրելուց յետոյ նոքա կաուրից վայր եկան բակը և կամաց քայլերով մտան սուն:

## Գ.

Աւօյի և Գիւզալի հեռանալուց յետոյ՝ ձապին Մարտիրոս աղան և իւր կինը, երկար խօսեցին, երկար վիճեցին:

Ամբողջ գիշերը նոքա անքուն անցուցին, գիշերով կանչեցին Մըհէին, խորհուրդ արին նորա հետ, այսպէս ասած թալեցին, բռնեցին, վերջնականապէս եկան այն համոզմունքին, որ Աւօն չգնայ օտարութիւն, ոչ թէ՛ նրա համար, որ իրանք չեն ցանկանում, այլ հաստատ գիտէին որ նա չի հրաժարուիլ իւր համոզմունքից: Նոցա անգաղար վիճելու շնորհիւ չիմացան թէ ի՞նչպէս անցաւ գիշերը:

— Կին, գոչեց Մարտիրոս աղան. երգիկը նայիր, արդէն լուսացել է, գնանք աղօթարան, կանչենք Աստուծուն մեզ օգնական:

Կինը դուրս ելաւ. աղբիւրի պաղ-պաղ ջրով լուացուելուց յետոյ, ծունկ չոգած, դողդողուն ձեռքերը դէպի երկինքը բարձրացած սկսաւ աղօթքներ մրմնջալ:

— Ես մեռնիմ քզի, բարի լուս Աստուած, դու իմ սաս հասնիս իմ մէկ ու ճար որդուն, ազատիս անօրէն քրդի ձեռքից: Մեռնիմ քրզի Մշու սուլթան սուրբ Կարապետ, դու իմ ըզիզ, հարազատ որդուս թե ու թիկունք հասնես, ես Խատուն տիրամէր Աստուածածին, ես սուրբ Սարգիս և այլն:

Աղօթելիս նորա աչքերից թափուում էին յորդարատ արտասուք: Մարտիրոս աղան և Մըհէն ևս դուրս եկան տանից և լուացուեցան: Մարտիրոս աղան կանգնեց աղօթքի, իսկ Մըհէն դարձաւ դէպի իւր աղօթարանը և սկսեց իր ճամազը: Նա միւս քրդերի պէս երկար չէր նամազ անում, այլ հաղիւ 15 րոպէ. նա իր ճամազ-ում Աւօյի համար յաջողութիւն էր մաղթում:

Արդէն առաւօտ էր: Արեգակը իւր առաւօտեան նուազ նշընները սփռել էր երկրիս վերայ: Եռում էր գիւղական կեանքը, մի կողմից լսելի էր լինում կովի բառաչիւնը, մի կողմից երկրագործի «հոռովելը», միւս կողմից թռչունների առաւօտեան քաղցր դայլայլիկը:

Մարտիրոս աղան գնաց տուն, պատուիրեց իր որդուն՝ Աւօյին, որպէս զի չգնայ արաբ վարելու, այլ պատրաստութիւններ տեսնի. Աւօն հնաղանդուեց իր հօրը:

Դ.

Աւօն և Մըհէն ոչ որի ասածին առանձին ուշադրութիւն չէին դարձնում. նոքա տեսնում էին կռուի պատրաստութիւնը, նոյն իսկ ամբողջ օր ոչինչ չուտելով, իսկ Մարտիրոս աղան և իւր կինը կեցած՝ ապշած նայում էին իւրանց որդու վերայ, որը այնպէս էր իրան պահում, կարծես թէ ոչինչ չէ լսել:

Երեկոյ էր. Աւօն, նոպատարին ագիշերապահին՝ կտուրի վերայ կանգնացրել էր, որ երբ գան՝ իրեն իմաց ապր:

Ահա՛, գիշերապահը ձայն տուեց երդիկից, թէ գալիս են. թէպէտ այդ լուրը շփոթութիւն յառաջացրեց այդ փոքրիկ ընտանիքի մէջ, բայց Աւօն մի բանի խօսքերով քաջակերեց, որպէսպի չվախենան: Աւօյի աժգոյն և տխուր մայրը աղօթում էր, իսկ հայրը գերանդին ձեռքին արտասուելից աչ-

քերը դարձրեց դէպի հարսը, որը լուռ ու մունջ կեցած էր, իսկ արտասուքը հեղեղի պէս թափուում էր նորա աչքերից:

Հեռուից արդէն սկսեցին ձիաների արոփուները, մարդկանց աղաղակները և նոցա հետ հրացանների թնդիւնը: Մըստոն, որը կանխապէս լուր էր ստացել գիւղացիներից, անարգել կերպով եկաւ Մարտիրոս աղայի վերայ: Ըրջապատեցին չորս կողմից տունը: Պէտք բարձրացան կուռի վերայ և երդիկից, իսկ կէսն էլ դռնից հրացաններ էին արձակում ասն մէջ: Աւօն և Մըհէն ապահով տեղից անդադար գնդակներ էին արձակում և թոյլ չէին տալիս բրդերին ներս մտնելու: Մըստոն տեսնելով, որ ճար չկայ՝ հրամայեց կուռի դուռը և մտնել ներս: Բայց Աւօն ու Մըհէն կռնակ կռնակի տուած միջանի հոգի բրդերից սպանեցին, որոնց թըլոււմ էր և Մըհէի եղբայրը: Քրդերը երդիկից նկատեցին Մըհէին և բարձրաձայն գոչեցին «Մըհէն, Մըհէն»: Սպանեցէք դորան, գոչեց Մըստոյ աղան, որը չէր մասնակցում կըռուին և հեռուից դիտում էր. մի գնդակ կպաւ Մհէյի կուրծքին և տապալեց գետինը:

Աւօյի ծեր հայրը չէր յուսահատուել, խրախուսում էր իւր որդուն, միայն խեղճ մայրը ուշաթափ ընկած էր գետին. իսկ Աւօյի կինը այդ ժամանակ չէր հեռանում իւր ամուսնուց. նա կպած էր նորա կրծքին գրկած իւր որդուն, որ յուսակաուր և լեղապատառ աղաղակում էր և ուռի նըման դողում:

Բարբարոսների գնդակները կարկառի նման թափուում էին. ահա այդ միջոցին մի գնդակ կպաւ Մարտիրոս աղային և սա ընկաւ գետին:

Աւօն տեսնելով հօրը՝ ընկաւ հօր վերայ, և համբուրեց նրան:

Այդ միջոցին քրդերին յաջողուել էր ասն դուռը կուռել և քիչ էր ձեացել, որ ներս թափուեն: Այդ միջոցին ընկաւ նաև Աւօյի մայրը: Բայց Աւօն չէր վհատուում, նա կաւում էր հերոսաբար. նորա աչքերը լցուած էին արիւնով. նա վառուում էր վրէժխնդրութեան կրակով: Նա որոնում էր իւր հակառակորդին, բայց դժբաղդաբար, վերջինս չէր մասնակցում կըռուին. նա հրացանը պարպեց խառն ամբոխի վերայ:

Նա այնպէս արագութեամբ էր պարպում հրացանը և լըցնում, որ մինչև բրդերի տան մէջ յայտնուելը՝ միքանի հոգի սպանեց և ապա ինքը հերոսաբար ընկաւ Գրդերը տեսնելով Գիւղալին, սկսան աղաղակել, փակցրէք, բայց Գիւղալը չէր մոռացել իւր երգումը, ամուսնու և դեռահաս ու դեռափթիթ որդու ընկնելուն պէս անմիջապէս հանեց ծոցից դաշոյնը, խփեց իրեն և ընկաւ ամուսնու վերայ, Գուրդ ամբօխը ներս խուժելով՝ տեսան գեանի վրայ վեց դիակներ, որոնց թուում և Մըհէի դին: Նոքա կողոպտեցին ամբողջ տունը, վերցրին Մըհէի դիակը և գուրս հանելով կտոր կտոր արին:

Նոքա զարմանում էին Աւօյի բաջութեան վերոյ և նախատում Մըհէին, բայց Մըստոն լուռ ու մունջ էր: Նոքա գիւղից գուրս գալով և իրանց հետ վերցրած 10 դիակներ՝ դնացին:

Ձէ կարելի երևակայել Մըստոյ աղայի կնոջ ուրախութիւնը, երբ նա տեսաւ, որ ամուսինը առանց հայուհու է գալիս: Նա փաղաքշանքներ է անում ամուսնու սիրաբ գրաւելու, բայց այդ բանը նրան չէ յարողում: Մըստոյի երևակայութեան առաջ միշտ պատկերացած է լինում հայուհին:

Այդ հասել կռուի պատճառաւ Գ. գիւղի բնակիչները ասնից գուրս չէին գալիս, երբ բրդերը հեռացան՝ նոքա դնացին և Մարտիրոս աղայի տան յատակի վրայ սպանուած գտան հինգ դիակներ, որոնց թաղումը առաւօտեան գիւղական բահանան կատարեց շատ հասարակ:

Ա. ՄԿՐՏՁԵԱՆ

